

ԷԿՈՆՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՆԱՆԻՋՄՈՒՄ

Հեղինակ ԶԱԽՎԵՐԴՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

Շրջակա միջավայրի պահպանության մեխանիզմի (այսուհետ՝ ՇՄՊՄ) կատարելագործումը և արդյունավետ իրավական կարգավորումը հատկապես վերջին տասնամյակների գիտատեխնիկական և տնտեսական առաջընթացի պայմաններում հրամայական են դարձել բոլոր պետությունների համար: Տնտեսական գործունեությամբ պայմանավորված՝ բազմաթիվ էկոլոգիական ռիսկերի առկայությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է ստեղծում մշակելու շրջակա միջավայրի պահպանության *համալիր* մեխանիզմ, որը թույլ կտա տնտեսական գործունեության յուրաքանչյուր փուլում (պլանավորում, արտադրական գործընթաց, տեխնիկական վերագինում, կոնսերվացում և այլն) կանխարգելել կամ նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, իսկ անբարենպաստ հետևանքների առաջացման դեպքում՝ վերացնել կամ հնարավորինս մեղմել դրանց ներգործությունը: Շրջակա միջավայրի որակի պահպանությունը և բարելավումը կարող են իրական լինել, եթե ՇՄՊՄ-ում ներառված տարատեսակ գործիքների իրավական կարգավորումն ապահովում է դրանց արդյունավետ գործառուցումը՝ պետության, հասարակության և, իհարկե, տնտեսվարողի շահերի համադրմամբ: Իրավաբանական գրականության մեջ *իրավական կարգավորման արդյունավետությունը*՝ որպես օրենսդրության կիրառման պրակտիկական բնութագրող առանցքային կատեգորիա, տարբեր բնորոշումներ է ստացել, որոնք իրենց բազմազանության մեջ հիմնականում հան-

գում են հետևյալին. *իրավական կարգավորման արդյունավետությունը* իրավական կարգավորման արդյունքի և նպատակի հարաբերակցությունն է՝:

Սույն հոդվածի նպատակն է իրավական կարգավորման համատեքստում վեր հանել էկոլոգիական ապահովագրության և ՇՄՊՄ մյուս գործիքների հարաբերակցությունը, բնութագրել դրանց միջև առկա համակարգային կապերը և ձևակերպել օրենսդրության մեջ այդ կապերի հստակ դրսևորման հիմնական մեթոդական մոտեցումները: Ուսումնասիրության առարկան արդիական է հատկապես ՀՀ էկոլոգիական օրենսգրքի ընդունման նախաշեմին, որը՝ որպես բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ոլորտի հասարակական հարաբերությունները կարգավորող առանցքային իրավական ակտ, պետք է ամրագրի ՇՄՊՄ գործիքների համակարգը և դրանց գործառման հիմնական սկզբունքները:

Էկոլոգիական ապահովագրության ինստիտուտն ընդգրկում է հարաբերականորեն ինքնուրույն, սակայն միմյանց հետ սերտորեն փոխկապակցված հասարակական հարաբերությունների երկու խոշոր խումբ, որոնք կազմում են անդերառաջինգի՞ բովանդակությունը.

1. էկոլոգիական ապահովագրության պայմանագիր կնքելու և ապահովագրի կողմից ապահովագրավճարի մուծելու կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերություններ,

2. ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերություններ:

Անդերառաջինգը՝ որպես ապահովագրական հարաբերությունների բոլոր փուլերն ընդգրկող բարդ գործընթաց, ներառում է

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ապահովագրության ենթակա ռիսկերի ընտրությունը, դրանց գնահատումը և դասակարգումը, ապահովագրավճարի սահմանումը, ապահովագրական հատուցման չափի որոշումը, այնուհետև՝ ապահովագրական պայմանագրի կնքումը և դրա պայմանների կատարումը: Նման լայն ընդգրկումն էլ հենց պայմանավորում է էկոլոգիական ապահովագրության և ՇՄՊՄ այլ գործիքների հարաբերակցության ուսումնասիրության անհրաժեշտությունը:

ՇՄՊՄ-ը կառավարման մեթոդների և գործիքների ամբողջական համակարգ, որի միջոցով արտադրական և սոցիալ-տնտեսական գործընթացներին համահունչ կազմակերպվում, կարգավորվում և համակարգվում են բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանությանը միտված գործընթացները, վերարտադրվում է շրջակա միջավայրի որակը՝ որպես անփոխարինելի հասարակական բարիք, բավարարվում են հասարակության բազմաթիվ պահանջումները³: Նախորդ հարյուրամյակի երկրորդ կեսը նշանավորվեց զարգացած պետություններում (ԱՄՆ, ԵՄ անդամ պետություններ) էկոլոգիական օրենսդրության ձևավորմամբ և բուռն զարգացմամբ: Այդ ժամանակից սկսած՝ շրջակա միջավայրի պահպանության գործիքաշարը մշտապես ընդլայնվել է՝ միաժամանակ կրելով նաև որակական փոփոխություններ, ինչը հիմնականում դրսևորվել է ՇՄՊՄ համակարգում կազմակերպարական գործիքների նկատմամբ շուկայական և ֆինանսավարկային գործիքների (խթանող գործիքներ) դերի բարձրացմամբ: Բնականաբար, ՇՄՊՄ գործիքները սերտ փոխազդեցության մեջ են գտնվում ինչպես միմյանց, այնպես էլ իրավունքի տարբեր ճյուղերի բազմաթիվ ինստիտուտների հետ: Սույն հոդվածի դիտանկյունից խնդրին մոտենալիս կարելի է պայմանականորեն ընդունել, որ էկոլոգիական ապա-

հովագրության և ՇՄՊՄ մյուս գործիքների հարաբերակցությունը կազմում է այդ ինստիտուտի ներքին կողմը, իսկ էկոլոգիական ապահովագրության և այլ իրավական ինստիտուտների միջև հարաբերակցությունը՝ արտաքին կողմը:

Ելնելով մեր առջև դրված խնդրից՝ նպատակահարմար ենք գտնում էկոլոգիական ապահովագրության հարաբերակցությունը ՇՄՊՄ գործիքների հետ դիտարկել ըստ վերջիններիս հետևյալ դասակարգման.

1. **կազմակերպարական գործիքներ** (ստանդարտացում, նորմավորում, սերտեֆիկացում, լիցենզավորում, էկոլոգիական փորձաքննություն)⁴,

2. **տեղեկատվական գործիքներ** (մոնիթորինգ, կադաստր, հաշվառում, էկոլոգիական աուդիտ, ինքնահսկում, շրջակա միջավայրի պահպանության գործողությունների պլանավորում և ծրագրավորում),

3. **շուկայական և ֆինանսավարկային գործիքներ** (բնապահպանական և բնօգտագործման վճարներ, ֆինանսավորում, շրջակա միջավայրի պահպանության վարկավորում, էկոլոգիական ապահովագրություն)⁵:

Շրջակա միջավայրի պահպանության կազմակերպարական գործիքները դասվում են, այսպես կոչված, «կոշտ» կարգավորող գործիքների շարքին (բխում են իշխանական ենթակայության հարաբերություններից), որոնք սահմանվում են պետության կողմից և ուղղակի հասցեագրված են տնտեսվարողին, ինչպես նաև պետական լիազորված մարմնին: Այս խմբի գործիքները կոչված են ապահովելու իրականացվող տնտեսական գործունեության, թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների համապատասխանությունը գործող էկոլոգիական օրենսդրության պահանջներին: Բնականաբար, ապահովագրողի համար առանցքային նշանակություն ունեն այն բոլոր հանգամանքները, որոնք պայմանավորում են ապահովադրի բնականոն տնտեսական գործու-

նելությունը և ֆինանսական կայունությունը: Մինչդեռ ստանդարտացման, նորմավորման, սերտեֆիկացման, լիցենզավորման, ինչպես նաև էկոլոգիական փորձաքննության վերաբերյալ օրենսդրության պահանջների խախտման դեպքում տնտեսվարողի նկատմամբ կարող են կիրառվել ներգործության բավականին խիստ միջոցներ՝ ընդհուպ մինչև գործունեության դադարեցում, ինչն ապահովագրողի համար տնտեսապես շահավետ չէ: Ուստի վերոհիշյալ պահանջների պահպանությունը կարող է վճռորոշ լինել ապահովագրական պայմանագրի կնքման հարցը լուծելիս, իսկ որոշ դեպքերում՝ նաև ապահովադրի համար արտոնյալ կամ ընդհակառակը՝ առավել խիստ պայմաններ սահմանելիս, որոնք կարող են վերաբերել ապահովագրավճարի չափին, վճարման ժամկետներին, ապահովագրողի կողմից մատուցվող այլ ծառայությունների պայմաններին: Ապահովադրի համար անբարենպաստ հետևանքների առաջացումը կանխելու, ինչպես նաև իրենց համար կայուն եկամուտներ ապահովելու նպատակով էկոլոգիական ապահովագրության ոլորտում մասնագիտացած բազմաթիվ արտասահմանյան ընկերություններ (Lloyds Insurance, Houghton Mifflin Company, Swiss Reinsurance Company)⁶ մատուցում են նաև իրավաբանական և տնտեսագիտական խորհրդատվական ծառայություններ:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք նշել, որ կոնկրետ ապահովադրի կողմից ստանդարտացման, նորմավորման, լիցենզավորման, ինչպես նաև էկոլոգիական փորձաքննության վերաբերյալ օրենսդրության պահանջների պահպանման մակարդակը վերջինիս՝ որպես գործընկեր բնութագրող կարևոր ցուցանիշ է, որն ապահովագրողին թույլ է տալիս օրենքով սահմանված շրջանակներում որոշել «խաղի կանոնները»:

Հայտնի է, որ ապահովագրական համակարգն ունակ է հստակ կատարելու իր գործառույթները միայն ռիսկի և անորո-

շության որոշակի պայմաններում⁷: Ֆ. Նայթը, վերլուծելով ռիսկի (կանխատեսելի հավանականության) և անորոշության (կորստի անկանխատեսելի հավանականության) հարաբերակցությունը, հանգում է այն համոզման, որ ապահովագրությունն առավել արդյունավետ է գործում առաջինի պարագայում⁸: Այլ կերպ ասած՝ ապահովագրողը պետք է հստակ տեղեկատվություն ունենա ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականության, ինչպես նաև դրա տնտեսական հետևանքների (վնասի չափի) նվազագույն և առավելագույն շեմերի վերաբերյալ. առանց այս տեղեկատվության ապահովագրողը չի կարող ճիշտ հաշվարկել ապահովագրվաճարը: Այսինքն՝ որքան մեծ է անորոշությունը, համապատասխանաբար նույնքան մեծ է ռիսկը: Այդ իսկ պատճառով դժվար է ապահովագրել երկարաժամկետ ռիսկերը, որոնք ի հայտ են գալիս տարիներ անց, ինչպես նաև այն ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել հսկայական կորուստների: Նշված հատկանիշները բնորոշ են էկոլոգիական ռիսկերի մեծամասնությանը⁹: էկոլոգիական ապահովագրության պարագայում ապահովագրողի համար չափազանց կարևոր է նաև նվազագույնի հասցնել տեղեկատվական ասիմետրիան, որն առաջանում է այն դեպքերում, երբ ապահովադիրն ապահովագրողին չի տրամադրում իր մոտ եղած անհրաժեշտ տեղեկատվությունը ռիսկերի, դրանց առաջացման հնարավոր պատճառների և էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ: Տեղեկատվության հավաքագրումը և վերլուծությունը կազմում են անդերռայթինգի նախնական փուլը, երբ ապահովագրողն անմիջապես հաճախորդից կամ ապահովագրական գործակալի կամ միջնորդի միջոցով ստանում է ապահովագրության հայտ, որը կոնֆիդենցիալ տեղեկատվություն է պարունակում էկոլոգիական ռիսկերի ապահովագրության համար էական նշանակություն ունեցող և ապահովադիրն հայտնի հանգամանքների մասին¹⁰: Այս

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

փուլում գործում է «կողմերի միջև առավելագույն վստահության սկզբունքը»: Վերոգրյալի լույսի ներքո դժվար է գերազնահատել տեղեկատվական գործիքների դերը էկոլոգիական ռիսկերի ապահովագրության հարցում: Դրանց ներդաշնակ գործառույնը և տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարումը պետական լիազորված մարմինների, ապահովագրի և ապահովագրողի միջև հնարավորություն են տալիս զգալիորեն բարելավելու ապահովագրական ծառայությունների որակը, նվազեցնելու դրանց արժեքը և ձևավորելու փոխադարձ վստահության մթնոլորտ: Հակառակ պարագայում, երբ տեղեկատվական ասիմետրիան չի հաջողվում մեղմել օրենսդրական լուծումների շրջանակներում, ապահովագրական ընկերությունները ստիպված են լինում մեծացնել գործակալման ծախսերը՝ ստեղծելով տարատեսակ մոնիթորինգային և վերահսկողական ծառայություններ¹¹: Այս դեպքում, բնականաբար, ավելանում է ապահովագրական ծառայությունների ինքնարժեքը, ինչն իր հերթին կարող է բացասաբար անդրադառնալ ապահովագրական շուկայի վրա:

Տեղեկատվական գործիքների օրենսդրական կատարելագործումը կարևոր նախապայման է էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի որակական առաջընթացի համար: Այս առումով օրինակելի է ի կատարումն «էկոլոգիական պատասխանատվության մասին» Սպիտակ փաստաթղթի¹² դրույթների՝ ԵՄ միասնական տեղեկատվական հենքի ստեղծումը, որը ներառում է ԵՄ պետություններում իրականացվող էկոլոգիական մոնիթորինգի, կադաստրի և հաշվառման տվյալները: Նմանատիպ տեղեկատվական ռեսուրսները, բնականաբար, չեն փոխարինում ապահովագրական ընկերությունների մոնիթորինգային ծառայություններին, սակայն դրանք

թույլ են տալիս ստանալ ելակետային տվյալներ և առավել արդյունավետ կերպով ուղղորդել հետագա աշխատանքները:

Վերոգրյալի կտրվածքով անդրադառնալով ՀՀ էկոլոգիական օրենսդրությանը՝ պետք է նշել, որ թեև առանձին բնական ռեսուրսների (հողեր, ջրեր, ընդերք, անտառներ, կենդանական ու բուսական աշխարհ և այլն) օգտագործման և պահպանության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը որոշակիորեն ամրագրում են տեղեկատվական գործիքների համակարգը և դրանց գործառման հիմնական սկզբունքները, այդուհանդերձ միասնական ելակետեր, ինչպես նաև դրանք այլ գործիքներին շաղկապող մեխանիզմներ ազգային օրենսդրությամբ դեռևս ձևավորված չեն:

Բնութագրելով էկոլոգիական ապահովագրության և տեղեկատվական գործիքների հարաբերակցությունը՝ կարող ենք փաստել, որ դրանք մի կողմից հնարավորություն են տալիս ապահովագրողին ճիշտ գնահատելու տնտեսական գործունեությամբ պայմանավորված ռիսկերը, սահմանելու համարժեք սակագներ և ապահովագրավճար, իսկ մյուս կողմից ապահովում են էկոլոգիական ապահովագրության հարաբերությունների թափանցիկությունը՝ ռիսկերի գնահատման, սակագների և ապահովագրավճարի հաշվարկման մասով: Այսինքն՝ տեղեկատվական գործիքների արդյունավետ գործառույնը, ի թիվս այլ պայմանների, էկոլոգիական ապահովագրության կողմերին թույլ է տալիս կառուցել առողջ, փոխշահավետ և ճկուն ապահովագրական հարաբերություններ:

Շուկայական և ֆինանսավարկային գործիքները, ի տարբերություն կազմակերպահրավական գործիքների, միջնորդավորված ազդեցություն ունեն շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վրա, թեև ուղղակիորեն միտված են այդ նպատակին: Գործիքների այս խումբն արևմտյան հեղինակներն անվանում են

նաև «խթանող գործիքներ»¹³, այսինքն՝ դրանց կիրառմամբ շրջակա միջավայրի պահպանությունն ապահովվում է տնտեսվարողի շահերի բավարարման համատեքստում՝ խրախուսելով վերջինիս օրինապահ վարքագիծը: Այս գործիքների միջոցով են կյանքի կոչվում էկոլոգիական իրավունքի՝ «աղտոտողը վճարում է», «առավել արդյունավետ տեխնոլոգիայի կիրառման», «ծագման վայրում վնասակար ազդեցությունների չեզոքացման», «հնարավոր վնասի կանխարգելման» սկզբունքները:

Գտնվելով միևնույն հարթության վրա՝ էկոլոգիական ապահովագրության հարաբերակցությունն այս խմբի գործիքների հետ արտահայտվում է միմյանց փոխլրացնող օղակների ձևավորմամբ, որտեղ տնտեսվարողի կողմից որևէ գործիքի կիրառումը հնարավորություն է ընձեռում արդյունավետորեն օգտվել մյուսներից: Օրինակ, հանք շահագործող ընկերությունը, որը ձեռք է բերել էկոլոգիական ապահովագրության պոլիս, այլ հավասար պայմանների դեպքում առավել վստահելի գործընկեր է առևտրային բանկի համար, որը պատրաստվում է վարկ տրամադրել արտադրական հզորությունների զարգացման նպատակով: Այս պարագայում էկոլոգիական ապահովագրության պոլիսի առկայությունը գրեթե չեզոքացնում է կազմակերպության անվճարունակ դառնալու ռիսկը՝ շրջակա միջավայրի վթարային աղտոտման դեպքում պատճառված վնասները հատուցելու և սեփական միջոցներով վերականգնման միջոցառումներ կատարելու պարտավորությունն առաջանալու պայմաններում: Էկոլոգիական ապահովագրությունը թույլ է տալիս կազմակերպության պատասխանատվության ռիսկը փոխանցել մասնագիտացված ապահովագրական ընկերության, որը տեղաբաշխում է այն և արդյունավետորեն կառավարում:

Արևմտյան Եվրոպայի պետություններում ՇՄՊՍ զարգացման ներկայիս մի-

տումները բնութագրվում են առանձին գործիքների սերտաճման արդյունքում նորերի ձևավորմամբ, որոնք արդեն միավորում են տարբեր կատեգորիաներում ընդգրկված գործիքներին բնորոշ հատկանիշները և իրենց մեջ կրում են բնօգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության կառավարման համակարգում ծանրության կենտրոնը դեպի շուկայական մեթոդները տեղաշարժելու ներուժ:

ՇՄՊՍ-ը ձևավորող երեք խումբ գործիքների և էկոլոգիական ապահովագրության հարաբերակցության վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ վերջինիս նկատմամբ դրանց գործառնումը կրում է տեղեկատվական ապահովման գործառնությի, սակայն յուրաքանչյուր դեպքում ստացվում է որակապես տարբեր տեղեկատվություն, որն էկոլոգիական ապահովագրության հարաբերություններում ուղղվում է որոշակի խնդիրների լուծմանը: Այսպես, **կազմակերպահրական գործիքների** կիրառումը թույլ է տալիս տեղեկատվություն ստանալ հավանական ապահովադրի՝ որպես կոնտրագենտի կողմից իրականացվող գործունեության (թողարկվող արտադրանքի կամ մատուցվող ծառայությունների) էկոլոգիական օրենսդրության պահանջներին համապատասխանության վերաբերյալ, ինչի հիման վրա անդերռայթինգի նախնական փուլում ապահովագրողը գնահատում է ապահովագրական պայմանագիր կնքելու նպատակահարմարությունը, ինչպես նաև հնարավոր ռեժիմը և համապատասխան որոշում կայացնում: **Տեղեկատվական գործիքների** արդյունավետ գործառնումն ապահովադրին, ինչպես նաև ապահովագրողին հնարավորություն է ընձեռում ցանկացած փուլում գնահատելու (վերագնահատելու) ռիսկերը և անհրաժեշտության դեպքում փոփոխելու ապահովագրական պայմանագրի պայմանները: **Շուկայական և ֆինանսավարկային գործիքների** կիրառումը թույլ է տալիս տնտեսվարողներին ստեղծելու բարենպաստ միջավայր տնտեսա-

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

կան գործունեության իրականացման և լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման համար: Այս խմբի գործիքների կիրառման վերաբերյալ տեղեկատվությունը հանդես է գալիս որպես այցեքարտ՝ շուկայի այլ մասնակիցների հետ տնտեսական գործունեությամբ պայմանավորված պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելիս:

Ազգային օրենսդրությամբ էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի

ամրագրման համատեքստում տեղայնացնելով սույն ուսումնասիրության արդյունքում կատարված եզրահանգումները՝ գտնում ենք, որ ընդունվելիք ՀՀ էկոլոգիական օրենսգիրքը, «էկոլոգիական ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև տեղեկատվական հոսքերի կառավարումը միջնորդավորող այլ նորմատիվ-իրավական ակտերը պետք է ապահովեն անդերառաջինգի գործընթացում անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը, ինչպես նաև դրա վերահսկելիությունը պետական լիազորված մարմնի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

- ¹ Տե՛ս Теория государства и права: Курс лекций под ред. Н.И. Матузова и А.В. Малько. -2-е изд., перераб. и доп. М.: Юристь, 2000, էջ 732:
- ² Underwriting եզրույթը հայերեն համարժեք չունի. ռուսական հանրագիտարանային բառարանը տալիս է հետևյալ բորոշումը. **ԱՆՈՒՆՔ-ՆԱՅԻՆՈՂ** 1) ապահովագրության նպատակով ռիսկերի զնահատումն է, 2) ապահովագրության պայմանագրի կնքումը և դրա պայմանների կատարումը (Экономика и страхование. Энциклопедический словарь. — М.: Цюрих-ПЭЛ, 1996, էջ 212): Այսպիսով, **անդերառաջինգը** ապահովագրողի կողմից իրականացվող համալիր գործընթաց է՝ ուղղված ռիսկերի ապահովագրմանը, ներառյալ՝ դրանց զնահատումը, ապահովագրման հնարավորության և համարժեք ծածկույթի որոշումը, ռիսկերի և հաճախորդների համապատասխանության ստուգումն ապահովագրական ընկերության նպատակներից և խնդիրներին՝ ապահովագրական (վերաապահովագրական) պորտֆելի հուսալիության և հավասարակշռության ապահովման տեսանկյունից:
- ³ Տե՛ս Н. В. Пахомова, К. К. Рихтер. Экономика природопользования и экологический менеджмент. Учебник для вузов. Изд.-во С.-Петербургского университета, 1999, էջ 262:
- ⁴ ՀՀ օրենսդրությանը հայտնի է որպես շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն:
- ⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 264-265:
- ⁶ Տե՛ս Policy Issues in Insurance. Environmental Risks and Insurance. No. 6. A comparative Analysis of the Role of Insurance in the Management of Environment-Related Risks. OECD. 2003, էջ 19:
- ⁷ Տե՛ս **Abraham, K. S.** Distributing Risk: Insurance, Legal Theory and Public Policy, New Heaven: Yale University, Press, 1986, էջ 248:
- ⁸ Տե՛ս **Knight, Frank H.** Risk, Uncertainty, and Profit. Boston. 1921, էջ 135:
- ⁹ Տե՛ս **И. Л. Абалкина.** Страхование экологических рисков (из практики США). — М.: ИНФРА-М, 1998, էջ 44:
- ¹⁰ Տե՛ս **И. Э. Шинкаренко.** Страхование ответственности: справочник. 2-е изд., испр. и доп. — М.: Анкил, 2006, էջ 95:
- ¹¹ Տե՛ս **Abraham, K. S.** Environmental Liability and the Limits of Insurance, 88 Columbia L. Rev., 1988, էջ 946:
- ¹² Տե՛ս White Paper on environmental liability. COM(2000) 66 final. 9 February 2000. Presented by the Commission.
- ¹³ Տե՛ս **Pesce G., Terceno A., Vigier H., Duran R.** Environmental insurance analysis from an economic approach // Insurance Markets and Companies: Analyses and Actuarial Computations, Vol. 1, Issue 3, 2010. Green Financial Products and Services. Current Trends and Future Opportunities in North America. A report of the North American Task Force (NAFT) of the United Nations Environment Programme Finance Initiative. August 2007.

ЭКОЛОГИЧЕСКОЕ СТРАХОВАНИЕ В МЕХАНИЗМЕ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ

Егине АХВЕРДЯН

*Аспирантка кафедры Гражданского
процесса ЕГУ*

Законодательное регулирование института страхования экологических рисков в РА и обеспечение его эффективного функционирования требует всестороннего анализа соотношения экологического страхования с другими инструментами составляющими механизм охраны окружающей среды.

В настоящей статье применением метода сравнительного анализа рассматриваются вопросы соотношения экологического страхования с организационно-правовыми, информационными, а также рыночными и финансово-кредитными инструментами охраны окружающей среды. На основании исследования выявлен характер соотношения и взаимодействия экологического страхования с каждым из условных категорий

инструментов охраны окружающей среды, проанализирована роль последних касательно института экологического страхования.

Обосновывается точка зрения, что соотношение экологического страхования с другими инструментами охраны окружающей среды, в зависимости от их категории, характеризуется накоплением определенного рода информации, которая в процессе андеррайтинга служит конкретным целям.

В результате исследования сформулированы основные методологические подходы правового обеспечения эффективного функционирования различных инструментов охраны окружающей среды с тем, чтобы формировать надлежащие правовые механизмы управления информационными потоками, которые имеют существенное значение для страховщика и страхователя, а также государственных органов контроля в сфере страхования.
